Հայաստանի Խորհրդի անդամների ցանկը յայտարարելուց յետոյ, սոց.–դեմ. պատգամաւորների ձեռնպահութեամբ, նախագահ ընտրուեց Ա. Սահակեանը (դաշն.), փոխ–նախագահներ՝ Գր. Տէր–Խաչատրեանը (ժող.) և Դ. Զուբեանը (ս.–յ.): Քարտուղար՝ Պ. Զաքարեանը (անկ.), երկրորդ քարտուղար՝ Ե. Սարգսեանը (դաշ.):

Խորհրդի նիստից յետոյ, զօր. Նազարբէկեանի դլխաւորութեամբ, տեղի ունեցաւ զօրահանդէս, որին ներկայ էին օտար ներկայացուցիչները, Խորհրդի և կառավարութեան անդամները և խուռն բազմութիւն: Զօրքերը, երաժշտութեամբ ու կանոնաւոր շարքերով, անցան հանդիսատեսների առջևից և բարձրացան Ազատաֆեան պողոտայով, հասարակութեան աննկարագրելի ցնծութեան ու ծափերի միջով:

Տեսարանը յուզիչ էր: Շատերի աչքից արցունք էր հոսում: Հայաստանի Խորհրդարան, հայոց կառավարութիւն, հայկական բանակ... Երազ չէ՞ր արդեօք:

Հայաստանի Խորհրդի երկրորդ նիստում, օգոստ. 3–ին, վարչապետ Քաջազնունին կարդաց կառավարական յայտարարութիւնը.

«Բացառիկ ծանր պայմանների մէջ է դործի անցել իմ կազմած կառավարութիւնը: Նա կոչուած է իրականացնելու դործադիր իշխանութիւն մի պետութեան մէջ, որ դեռ նոր է ծնունդ առել և տակաւին դուրս չի եկել իր կազմակերպման առաջին շրջանից: Կառավարութիւնը չունի ո՛չ մի յենարան անցեալում. նա չի՛ յաջորդում նախկին կառավարութեան՝ շարունակելու արդէն ընթացքի դրած պետական աշխատանքը. նա նոյնիսկ չի ժառանգում կենտրոնական իշխանութեան կարիքներին յարմարեցրած պատրաստի ապարատներ: Նա հարկադրուած է սկսելու ամէն բան սկզբից. անձև քաոսի և աւերակների կոյտից նա պէտք է ստեղծի կենսունակ և աշխատունակ մի մարմին:

Միւս կողմից, կառավարութիւնը դտնում է երկիրը այնպիսի վիճակի մէջ, որի բնորոշման համար մի բառ կայ միայն — կատաստրոֆիկ:

Չորս տարի տևող պատերազմը, մեծ յեղափոխութիւնը, ռուսական զօրքերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայսրութեան տարրալուծումը, պատերազմական ճակատի վրա կրած մեր պարտութիւնները, տերիտորիաների կորուստը, Անդրկովկասի բաժանումը անջատ պետութիւնների — այս խորին ցնցումները չէին կարող չթողնել իրենց ետևից ահռելի հետքեր: Տնտեսական կեանքի ու ֆինանսական դրութեան կատաղեալ քայքայում, դաղարում ապրանքների արդիւնաբերութեան և փոխանակութեան, դինամթերքի ծայր աստիճանի պակասութիւն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայութիւն կամ սոսկալի թանդութիւն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցութեան դադարում, երթևեկութեան ուրիշ միջոցների պակասութիւն, ապա հարիւր հազարներով հաշուող անտուն և անսնունդ դաղթականութիւն, անապահով կացութիւն սահմանների վրա և որպէս անխուսափելի հետևանք այս բոլորի—անիշխանութիւն: Ահա թէ ինչպիսի ծանր պայմանների մէջ կանչուել է աշխատանքի իմ կառավարութիւնը:

Այս բացառիկ դրութիւնը նախորոշում է արդէն կառավարութեան բնոյթը: Նա չի կարող ձգտել բազմակողմանի ու լրիւ դործունէութեան, չի կարող ունենալ լայն ծրագիր և սահմանափակուելու է ամենաանհրաժեշտ ու միանդամայն անյետաձդելի խնդիրներով: